

Մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը պարգևի է արժանացրել 100 տարվա շեմն անցած 10 տարեցի

1.10.2015

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ պարգևատրել է 100 տարվա շեմն անցած 10 տարեց մարդկանց: Մարզպետի կողմից դրամական պարգևի ենարժանացել Սեւան քաղաքի բնակիչ, 100 տարեկան Արաքսյա Մկրտչյանը, Լճափ գյուղի բնակիչ, 100 տարեկան Երուն Մանուկյանը, Վարդենիս քաղաքի բնակիչ, 102 տարեկան Ծաղիկ Սաֆարյանը, Ճամբարակ քաղաքի բնակիչ, 103 տարեկան Վարդանուշ Ոսկանյանը, Դպրաբակ գյուղի բնակիչ, 101 տարեկան Մարգարիտ Տավարաձյանը, Երանոս գյուղի բնակիչ, 113 տարեկան Դուրմեն Փինաչյանը, Չորագյուղ գյուղի բնակիչ, 101 տարեկան Շուշիկ Ավետիսյանը, Զոլաքար գյուղի բնակիչ, 101 տարեկան Խանում Տոնեյանը, Վարդաձոր գյուղի բնակիչ, 100 տարեկան Արեւիատ Մարգարյանը եւ Արծվանիստ գյուղի բնակիչ, 100 տարեկան Անախանում Մարգարյանը: Մարզպետի անունից տարեցներին այցելել, դրամական պարգևները եւ շնորհավորանքի խոսքերը փոխանցել են Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցները: